

Հուլիսի 24-ին Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանն իր կիսամյակային գործունեության հաշվետվությամբ հանդիպում ունեցավ մարզի ԶԼՄ-ների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Ասուլիսը համատեղվեց «Հետաքննող լրագրողներ», հասարակական կազմակերպության և «Քաունթերփարթ ինթերնեյշնլ», միջազգային կազմակերպության հայաստանյան գրասենյակի ֆինանսական աջակցությամբ Գեղարքունիքի մարզում իրականացրած «Լրագրողները՝ համայնքների զարգացման աջակիցներ», ծրագրի արդյունքների քննարկման հետ: Ներկայացնելով իրականացված աշխատանքները՝ ծրագրի համակարգող Սառա Պետրոսյանը նշեց, որ թեման եղել է տեղական իշխանությունների գործունեության հրապարակայնությունը, համայնքներում իրականացվող թերի վարչարարությունը, բնակչության առջև ծառայած սոցիալ-տնտեսական խնդիրները և այլն: Մարզպետին ներկայացվեց դասընթացի մասնակից ՀԿ-ների և ԶԼՄ-ների իրականացրած ուսումնասիրության արդյունքները և հրապարակումներում ներկայացված մտահոգությունները: Մարզպետը ողջունեց նախաձեռնությունը, սկսնակ լրագրողների կատարած աշխատանքը մարզի համայնքների գործունեության հրապարակայնության եւ թափանցիկության ապահովման ուղղությամբ եւ շեշտեց, որ աստիճանաբար համայնքապետարանները ստեղծում են իրենց կայքէջերը, դրանք թարմացնում նորություններով, հանրությանն իրազեկ դարձնում ընդունված որոշումների, համանքներում կատարվող այլ իրադարձությունների հետ: Կայքէջերը սպասարկելու համար տեղերում վերապատրաստվում են մասնագետները, իսկ մարզպետարանը համայնքների հետ այս ուղղությամբ իրականացնում է աջակցություն եւ համագործակցություն:

Ապա Մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը կարճ անդրադարձ կատարեց մարզի տնտեսության կես տարվա գրանցած արդյունքներին՝ այս տարվա հիմնական ձեռքբերումների մեջ առանձնացնելով գյուղատնտեսության ոլորտը: Նա շեշտեց, որ այս տնտեսական տարում ոչ միայն համայնքներում մոտ 2 հազար հեկտարով ավելացել են ցանքատարածությունները, այլ նաև դրանք առատ բերք են խոստանում:

-Տարին եղել է անչափ նպաստավոր թե դաշտավարության, թե անասնապահության ոլորտներում,-հավաստեց մարզպետը,-այնպես որ, այն բոլոր տնտեսությունների համար լինելու է եկամտաբեր և արդյունավետ գրեթե բոլոր ուղղություններում:

Նա հավաստիացրեց նաև, որ ՀՀ կառավարությունն այսուհետ էլ շարունակելու է սուբսիդավորել գյուղացիական տնտեսություններին տրամադրվող դիզվառեվիքը, պարարտանյութը, սերմացուները, գյուղատնտեսական վարկերը, գյուղի ու գյուղացու համար աջակցության այլ ծրագրեր է մշակելու և իրականացնելու:

Այնուհետև մարզի ղեկավարը պատասխանեց ներկաներին հուզող տարաբնույթ հարցերին: Պատասխանելով այն հարցին, թե ինչ է արվում մարզի

գյուղատնտեսությունը համապատասխան ու ժամանակակից տեխնիկայով ապահովելու ուղղությամբ, մարզպետն ասաց, որ, բացի ՀՀ կառավարության աջակցությամբ և լիզինգային եղանակով գյուղացիական տնտեսություններին գյուղտեխնիկա տրամադրելուց, արդեն մարզի 22 համայնքներ „Գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման եւ մրցունակության,, ծրագրի շրջանակներում կամ ձեռք են բերել համապատասխան ժամանակակից տեխնիկաներ, կամ՝ մոտ են դրանք ձեռք բերելուն:

Յուրաքանչյուր համայնքում ներդրված ծրագրի արժեքը կազմում է 120 միլիոն դրամ, որի շրջանակներում համայնքներում կատարվում են արոտների ջրարբիացման, խոտհարքերի բարելավման, գյուղտեխնիկայի ձեռքբերման, տոհմաբուծության և սերմաբուծության զարգացման աշխատանքներ, որոնք հատկապես նպաստավոր պայմաններ են ստեղծում անասնապահության զարգացման համար:

Գյուղատնտեսական մթերքների, մասնավորապես՝ կարտոֆիլի իրացման խնդրի կարգավորման մասին հարցին ի պատասխան մարզպետը նշեց, որ այս տարում ևս մարզի իշխանությունները կփորձեն մթերող տարբեր կազմակերպությունների միջոցով օգնության ձեռք մեկնել երկրագործներին: Եվ դա ոչ միայն կարտոֆիլի, այլ նաև՝ բոլոր տեսակի գյուղմթերքների իրացման խնդիրներում:

Հարց բարձրացվեց մարզպետարանի կողմից մարզի համայնքներում վարչական վերահսկողության ակտերի քննարկման ընթացքում ԶԼՄ-ներին և ՀԿ-ներին մասնակից դարձնելու ուղղությամբ: Գեղարքունիքի մարզպետը տեղեկացրեց, որ ուսումնասիրությունների արդյունքները ըստ համայնքերի տեղադրված են Գեղարքունիքի մարզպետարանի ինտերնետային կայքէջի համապատասխան բաժնում, իսկ ցանկություն հայտնողները կարող են մարզային խորհրդի նիստերի ընթացքում մասնակցել այդ քննարկումներին:

Գավառ քաղաքի անվանափոխության հարցի շուրջ մարզպետը կարծիք հայտնեց, որ տվյալ դեպքում վերջնական ու լավագույն ելքը պետք է լինի համաքաղաքային հանրաքվեն, թեև պատկան մարմիններն ըստ կարգի քննարկում են բարձրացված առաջարկությունը:

Հարցին, թե մարզերի համաչափ զարգացման ծրագրով որոնք է մարզպետը համարում առաջնահերթ ուղղություններ ներկայացնող, մարզպետը պատասխանեց, որ այսօր մարզի բոլոր համայնքներում ներդրվող ծրագրերն էլ դիտվում են առաջնահերթ, լինեն դրանք գյուղատնտեսական, քաղաքաշինական, ենթակառուցվածքների զարգացման, զբոսաշրջության զարգացման, ջրամատակարարման բարելավման, առողջապահական ու կրթական համակարգի արդիականացման և զարգացման: Պատասխանելով մարզում անասնաբուժական

ծառայությունների ոչ լիարժեք գործունեության և անասնահամաճարակների կանխարգելմանն ուղղված միջոցառումների ընթացքի մասին հարցին՝ մարզպետը նշեց, որ 2014 թվականի հունվար ամսից նախատեսում ենք մարզում վերականգնել անասնաբուժական նախկին ծառայությունները, մարզի քաղաքային համայնքներում բացել անասնաբուժական դեղատներ, իսկ համայնքներում, ելնելով անասնազխաքանակի թվից, կպահվեն սահմանված քանակի անասնաբույժների հաստիքներ: Անասնահամաճարակների կանխարգելմանն ուղղված բոլոր միջոցառումներն այս պահի դրությամբ արդեն կատարված են, և այժմ անասնաբուժական տեսչության կողմից ընթանում են փորձաքննական ուսումնասիրություններ և հետազոտություններ:

Հարցին, թե նախատեսվում է արդյոք Գեղարքունիքի մարզում հակակարկտային կայաններ տեղադրել, մարզպետը պատասխանեց, որ առայժմ ՀՀ կառավարությունը ծրագրում է եղած միջոցները ներդնել Արարատյան դաշտավայրի ցանքերը կարկուտից պաշտպանելու համար: Իսկ Գեղարքունիքի մարզում մոտակա ժամանակներում նման ծրագիր չի նախատեսվում իրականացնել:

Այն հարցին, թե ինչ ներդրումներ կարելի է ներգրավել մանր և միջին ձեռնարկատիրական ոլորտը զարգացնելու վրա, որպեսզի մեր քաղաքացիները միայն դրսերում աշխատանք ու բնակության վայր չփնտրեն, մարզի ղեկավարը նշեց, որ խնդիրը կայանում է ոչ այնքան աշխատատեղերի եւ ներդրումների բացակայության, որքան՝ համապատասխան ներքին ու արտաքին շուկաներ գտնելու մեջ: Նախևառաջ պետք է ուսումնասիրել և գտնել շուկան, որպեսզի սպասվելիք ներդրումները լինեն արդյունավետ եւ ծառայեն բուն նպատակին: Ի դեպ վերջին տարիների ընթացքում մեր շատ համայնքներում արդեն ստեղծվել են գյուղատնտեսական մթերքներ վերամշակող մանր և միջին ձեռնարկություններ, որոնք կարող են շարժվել կամ արդեն շարժվում են զարգացման ճանապարհով, - ավելացրեց մարզպետը:

Գավառի „Օրհուս,, կենտրոնի համակարգողի հարցերն ունեին բնապահպանական ուղղվածություն: Առաջին հարցին, թե մի քանի օր առաջ Ն. Գետաշեն, Վ. Գետաշեն եւ Մադինա համայնքների տարածքում կառուցված ՓՀԷԿ-ի փորձարկման ժամանակ տեղի ունեցած խողովակաշարի պայթյունի հետեւանքով Վ. Գետաշենի գյուղացիական տնտեսություններին պատճառված վնասն ինչպես է վերականգնվելու, Ռաֆիկ Գրիգորյանը պատասխանեց, որ գյուղապետարանի կողմից ստեղծվել է համապատասխան հանձնաժողով, որն այս պահին ճշտում է վնասների հնարավոր չափերը: Վնասները տնտեսություններին կփոխհատուցվի ՀԷԿ-ի սեփականատիրոջ կողմից: Երկրորդ հարցին , թե ինչ է արվում մարզի համայնքներում աղբահանությունը ժամանակին կազմակերպելու և աղբավայրերի շահագործումը կանոնակարգելու համար, մարզպետը պատասխանեց, որ

աղբահանության խնդիրը մարզում առհասարակ հիմնովին լուծված կհամարվի այն ժամանակ, երբ հիմնվեն աղբի վերամշակման կոմբինատներ, սակայն այս պահին աղբավայրերում աշխատանքներ են տարվում կուտակված աղբը թաղելու ուղղությամբ, մյուս կողմից էլ՝ ճանապարհները սպասարկող կազմակերպությունները մարզպետի հանձնարարությամբ հեռացնում են աղբը մարզի գլխավոր ճանապարհներից ու հանգստավայրերից: Այդուհանդերձ աղբահանությունը և աղբի կառավարումը շարունակական եւ տևական գործընթացներ են, և որոնք պահանջում են նաև հանրության ուղղակի մասնակցությունն ու մաքուր կենցաղավարությունը:

Մասնակիցների կողմից հարցեր ուղղվեցին նաև մարզի համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման խնդիրների շուրջ: Մարզպետը նշեց, որ այս խնդիրների լուծման համար իր պաշտոնավարման 1 տարվա ընթացքում արվել են շոշափելի քայլեր, որոնք տվել են դրական արդյունքներ: Համագործակցությունը խորացվել է „Հայջրնուկոյուդի,, ընկերության հետ, ինչի արդյունքում ընկերության կողմից մարզի մի շարք համայնքներում կատարված ներդրումները, միասին վերցրած, եղել են ավելին, քան կային նախորդ տարիների ընթացքում: Մասնավորապես ջրամատակարարման և ջրահեռացման խնդիրները բարելավվել են Ծաղկունք, Լճաշեն, Ծովագյուղ, Գանձակ, Սարուխան, Գավառ, Մարտունի, Սևան և մի շարք այլ համայնքներում: Ճամբարակ քաղաքում ևս մարզպետարանի միջնորդությամբ ջրամատակարարման և ջրահեռացման ցանցը հանձնվել է “Հայջրնուկոյուդու “ կառավարմանը, որի կողմից սպասվելիք ներդրումների հաշվին համակարգը կնորացվի ամբողջությամբ: Հնչեցին նաև առանձին համայնքներում ոռոգման ջրի մատակարարման կարգավորման, ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգման, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից մարզպետարան հասցեագրված դիմումների ուսումնասիրության և մի շարք այլ հարցեր, որոնց մարզպետը տվեց սպառիչ կամ բավարարող պատասխան:

Իր ամփոփիչ խոսքում Գեղարքունիքի մարզպետը նշեց, որ այժմ պետական միջոցներով և միջազգային դոնոր կազմակերպությունների ֆինանսական աջակցությամբ մարզի համայնքներում իրականացվում են ճանապարհաշինական, դպրոցաշինական, գյուղատնտեսական, կենսական նշանակության հարյուրավոր ծրագրեր, որոնք առաջ են մղում մարզի տնտեսությունը: Այս գործում անելիք ունեն նաև մարզի ԶԼՄ-ները և հասարակական կազմակերպությունները, որոնք պետք է հանրությանը պարբերաբար իրազեկեն իրականացվող ծրագրերի մասին: